# Տ. ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(29 սեպտեմբերի, 2013 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Եւ ապա երկնքի վրա մարդու Որդու նշանը պիտի երեւա,
եւ այդ ժամանակ երկրի բոլոր ազգերը լացուկոծ պիտի անեն
եւ պիտի տեսնեն մարդու Որդուն, որ գալիս է երկնքի ամպերի վրայով,
զորությամբ ու փառքով»
(Մատթ. ԻԴ. 30):

Սիրելի՛ հավատացյալներ, ամեն անգամ, երբ մենք ընդհանրական աղոթքի կամ առանձին մտահայումի մեջ ենք, մեր միտքը, հաճախ նաեւ մեզանից անկախ, սահում է ու մեկնվում Ավետարանի խորախորհուրդ խոքերը, որտեղից ամենապարզ ու զարմանահրաշ պատումների միջոցով մեզ է հառնում սրբազան անցյալն իր խորհուրդով: Ոմանց համար այսօր էլ այդ պատումները, չնայած իրենց ինքնատիպ ու անհամեմատելի արժեքին, զերակայում են իբրեւ զեթ անցյալի՝ զարմանալու ապիճան յուրօրինակ հուշագրություններ, անօրինակ փորձառություններ, բարոյական խրատանի, բայց ոչ ավելին: Ոմանց համար՝ ընդամենը եւ անգամ զայթելու ու զայթակղվելու հերթական առիթ... բայց ո՛չ մեզ համար: Որովհետեւ փնտրողի, որոնողի համար Աստվածաշունչը առավել քան ոգեւորումի, հոգետեսության առիթ է, եւ չկա՛ մեզ համար այլ ճանապարհ եւ այլ ճշմարտություն, ինչպես որ հայ մարդու համար չկա ինքնապետության, աստվածճանաչության այլընտրանք, եթե ոչ Հայ Եկեղեցու միջով, եւ սա ո՛չ այն պատճառով, որ բացակայում է այլընտրանքը, այլ բացառապես ա՛յն պատճառով, որ իբրեւ այդպիսին այլ վեմ, այլ սկզբնաղբյուր երբեւէ չի էլ եղել: Ավետարանական ընթերցվածը հրավիրում է մեզ խորհելու, խոկալու Մատթեոս ավետարանչի ԻԴ. գլխի 30-րդ համարի շուրջ, որտեղ խոսվում է մարդու Որդու, երկրի ազգերի, Տիրոջ նշանի եւ Քրիստոսի Գալստյան մասին :

Պետք է ասել, որ «մարդու Որդի» արտահայտությունն ինքնին, արդեն իսկ ուղենշող, կողմնորոշող բացահայտում է, որ ի շարս Տիրոջ կողմից տրված բազում ձեւակերպումների, կանխահոգաբար շնորհվում է մարդկությանը: Այս խոսքի զուտ կիրառական կերպը թվում է թե բավարար պիտի լիներ ժամանակին, շատերին անդրադառնալու Քրիստոսի ով լինելուն, որովհետեւ մինչեւ Քրիստոս ոչ ոք երբեւէ նման անդրադարձ չէր ունեցել, սակայն անգամ հասկանալով, շատեր չհավատացին, որովհետեւ աչքերով անընդունակ էին տեսնելու, գործերով անպատրաստ էին եւ հավատքով՝ պակասավոր: Ո՛չ թե փորձեցին անսալ աստվածային խոսքին, այլ փնտրեցին ու չգտան Քրիստոսի մեջ այն, ինչն իրե՛նք էին ցանկանում տեսնել, մոռանալով, որ հոգեւորը միշտ գերակա իրողություն է: Եւ այսօր էլ, երբ ճշմարտության չափաբաժինը կրկին նահանջել-նվազել է մարդկանց մեջ,

պակավ ին ոմանք իրենց միամիտ կենսասիրությամբ փորձում են գեթ սեփական պատուհանից ըմբռնել կյանքի բազմաշերտ դրսեւորումները՝ մոռանալով, որ անձնական-անհատական մոտեցումներով անկարելի է ըստ արժանվույն մոտենալ կամ հաղորդակցվել աստվածային ճշմարտությանը: Այնինչ Տերը պատգամում է՝ ճանաչեք ճշմարտությունը, եւ ճշմարտությունը կազատի ձեզ: Առ ոչինչ են բոլոր ավանդույթները, եթե դրանք ուղված չեն աստվածճանաչությանը: Լայն իմաստով՝ ոչինչ են մեր որոնումները, եթե ընտրել ենք զարտուղի ճանապարհ, եւ առ ոչինչ են մեր ձգտումները, եթե հաշվի չենք նստում սրբազան ավանդության հետ՝ արդյունքում կորցնելով խորհուրդը: Հետեւապես, ճշմարտությունն ըմբռնելու ճանապարհին կարեւոր հենակետ է մահկանացուի համար, թե ինչ ասել է «մարդու Որդի»: Գիտակցական այս ըմբռնողությունն է, որ ամեն անգամ մեզ առիթ պիտի ընծայի մի լրացուցիչ անդրադարձի մարդ-Աստված եւ Աստված-մարդ փոխհարաբերությանը:

Ավետարանական ընթերցվածի հաջորդ հանգրվանը՝ երկրի բոլոր ազգերի լացուկոծ անելու, այլ խոսքով՝ անպատրաստ լինելու մասին է, այլապես ինչո՞ւ պիտի լան վերջիններս Տիրոջ Գալստյան նախընթացին եւ Նրա նշանի տեսության ժամանակ: Չէ՞ որ ա՛յս է մարդկության հույսը եւ խաչի հաղթության ամբողջական փիրապետությունը հավիտենականի մեջ: Ակնհայտ է, որ «բացարձակ Խոսքը» չի՛ ճանաչում ժամանակի եւ տարածության որեւէ միավոր եւ հաճախ նաեւ մարդու կողմից դժվար է ընկալվում: Այս ամենի արդյունքում է, որ մեզանում էլ ոմանք Աստված փնտրելու ճանապարհին երբեմն շփոթվում եւ անգամ տեղի են տալիս: Եւ սրա՛ համար է նաեւ Տիրոջ պատվերը թե՝ ով մինչեւ վերջ համբերի, կփրկվի: Կամ մեկ այլ դեպքում՝ արթուն կացեք, աղոթք արեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք: Եւ ինչպես որ հեռավոր անցյալում որեւէ մեկի համար դժվարագույն խնդիր պիտի ծառանար սույն խոսքերի բուն նշանակությունը, այնպես եւ վաղն է անհնարին լինելու առանց Եկեղեցու: Հետեւաբար, չլինելու համար սգացող մեկը, չվերածվելու համար լացուկոծ անող ազգի, թելադրելի՛ պարտք է մեզ ամուր պահելու մեր Եկեղեցին՝ մեր սրբություն սրբոցը. հիշատակ եւ երախտագիտություն մեր սուրբ նախնյաց ու նահատակների, ի փառս ամենազոր Աստծու եւ հանուն լուսավոր գալիքի:

Անդրադառնալով Քրիստոսի գալուստին՝ նախ ասենք, որ Տիրոջ գալստյան մեկ հիմնական նպատակն էր «բովանդակություն հաղորդելը» այն ամենին, ինչը վաղուց ի վեր կորցրել էր իր բուն նշանակությունը՝ վերածվելով նշավակության: Քրիստոսի խաչելությամբ մարդկությունն աստիճանաբար ըմբռնեց, որ սոփեստությունից, գեղախոսելուց ու փիլիսոփայելուց զատ եւ շատ ավելի կա մեկ այլ մեկնակետ, որտեղ մարդ-Աստված փոխհարաբերությունը հստակ բարձրակետ ունի, իսկ Աստված-մարդ հարաբերությունը կոչված է հասանելի եւ հասկանալի լինելու: Հետեւապես, Ավետարանի խոսքը հերթական անգամ այլ բան չէ, եթե ոչ նախեւառաջ մարդու նախապատրաստությունը Քրիստոսի երկրորդ Գալստյանը: Ինչպես որ մի առիթով ասում է՝ Տիրոջ օրը ծածուկ է գալու, բայց հայտնապես:

Ինչ վերաբերում է «մարդու Որդու նշան» արտահայտությանը, ասենք, որ Աստվածաշունչն առլեցուն է Փրկչական Խաչի մասին վկայություններով ու հիշատակումնե-

րով: Խաչը քրիստոնեական գերագույն խորհրդանիշն է, փառապսակը Քրիստոսի փնօ-րինական սխրանքի. այն հիրավի երկրպագության առարկա է եւ մեր հոգու հենարան հանդիսացող Եկեղեցու հիմը, այն Եկեղեցու, որն իրականացնում է թե՛ մեր զգացածի ըմբռնողությունը՝ թույլ չտալով խարխափել միայնության ու անորոշության մեջ, եւ թե՛ մեկտեղված երջանկության ու դժբախտության մեջ՝ կոչված է «պատերազմելու» ամե-նայն արատավորի դեմ, շարունակ հաստատագրելով իր անփոխարինելի դերն ու մեր-ժելով գլուխ բարձրացնող գայթակղությունը: Խաչը համեմատվել ու զուգորդվել է մարդ-կության կյանքում ամենակարեւոր իրողությունների, իրադարձությունների հետ: Խաչի զարմանահրաշ խորհրդին են անդրադարձել մեր եռամեծ վարդապետներն ու հայրա-պետները, այնպիսի եկեղեցական հայրեր, ինչպիսիք են՝ Գրիգոր Լուսավորիչը, Նարե-կացին, Գրիգոր Տաթեւացին, Դավիթ Անհաղթը, Ներսես Լամբրոնացին, Շնորհալին, Խրիմյան Հայրիկը, Հովհաննես Սարկավագ վարդապետը, Հովհաննես Իմաստասերը, Ոսկեբերանը, Իսահակ Ասորին, Անտոն Մեծը, Աթանաս Մեծը, Կյուրեղ Երուսաղեմա-ցին, Հովհաննես Դամասկացին, Եփրեմ Ասորին, Օգոստինոս Երանելին եւ այլք: Խաչի խորհրդի կարեւորության ու լուսաբանման մասին է վկայում եւ այն, որ Հայ Եկեղեցին տոնում է Խաչին նվիրված չորս տոն՝ «Խաչվերաց», «Գյուտ Խաչի», «Սուրբ Խաչի երե-ւում», «Վարագա Սուրբ Խաչ». ի տարբերություն նշյալ երեք տոների, որոնք պակաս կարեւոր չեն իրենց խորհրդով ու բովանդակությամբ՝ «Վարագա Սուրբ Խաչը» միակն է, որը հատուկ է միայն մեր Եկեղեցուն, որովհետեւ ըստ էության այն հավասարապես ե՛ւ ազգային, ե՛ւ եկեղեցական տոն է՝ Խաչի խորհրդի հոգեւոր- հասարակական, անգամ գաղափարական լուսաբանմամբ: Եւ որովհետեւ այսօր Վարագա Սուրբ Խաչ է, սիրելի-նե՛ր, շնորհավորում եմ ամենքիս այս աստվածանվեր տոնի հրաշաղեկ առիթով:

Վարագա Խաչի տոնն առնչվում է խաչի եւ խաչելության ողջ իրականության հետ եւ խարսխվում կենարար Խաչի վարդապետությանը: Ավանդությունը հավաստում է, որ Տիրոջ Համբարձումից հետո կենսատու խաչափայտը առժամանակ լքված ու մոռացված է լինում Գողգոթայում: Երուսաղեմի առաջին եւ արժանաժառանգ եպիսկոպոս Հակոբոս Տեառնեղբոր ժամանակ, մանկական խաղի ընթացքում մի կաղ մանուկ պատահաբար դիպչում է խաչին եւ բժշկվում: Շուտով այս մասին հայտնի է դառնում, եւ ամեն կող-մից կույրեր, կաղեր ու բորոտներ շտապում են Գողգոթա՝ բժշկվելու: Այս ընթացքում է, որ Կլավդիոս կայսեր կինը՝ Պատրոնիկեն, Պողոս առաքյալի քարոզության ընթացքում դարձի գալով, այցելում է Երուսաղեմ՝ տերունական վայրերին երկրպագելու: Աստվա-ծային նախախնամությամբ թագուհու դուստրերից մեկը հանկարծամահ է լինում, բայց հարություն է առնում Տիրոջ խաչափայտին դիպչելով: Որից հետո Պատրոնիկեն Հռոմ է վերադառնում՝ իր հետ տանելով խաչափայտից մի մասունք: Այս մասունքն է, որ սերնդե-սերունդ փոխանցվելով հասնում է Հռիփսիմեին: Եւ երբ Դիոկղետիանոս կայսրը որոշում է կնության առնել Հռիփսիմեին, վերջինս Աստվածածնի հրահանգով այլ կույսերի հետ փախչում է Հայաստան եւ ապաստանում «հայոց Գալիլիայում»՝ Վարագա լեռան վրա, որտեղ եւ ամփոփում են Ս. Նշանը: Ապա գալիս են Վաղարշապատ եւ նահատակվում: Է. դարում այստեղ իր Հովել աշակերտի հետ ճգնելիս է լինում Թոդիկը եւ մի անգամ հետ-

թական պահեցողությունից հետո, աղոթքի պահին երբ փափագ է հայտնում տեսնելու Ս. Նշանը, ասելով՝ եթե Ս. Խաչը համբուրեմ, Քրիստոսին համբուրած կլինեմ, երկրից մինչև երկինք խաչաձև ճաճանչվում է և լուսավորում շրջապատը. այս բանին ականատես են լինում շրջակայքի ողջ բնակիչները: Ապա ձեռնամուխ են լինում Ս. Նշանի ամփոփմանն ու Վարագա համալիրի կառուցմանը: Վարագում Ս. Նշանի երևումը պատմագրության մեջ համեմատվել է Երուսաղեմում խաչի երևման, Թ-ոդիկ ճգնավորը՝ Ենովք նախապետի հետ: Քրիստոնեական խորհրդաբանության մեջ Վարագը համեմատվել է Նոյան տապանի և անգամ նախամեծար Ս. Էջմիածնի հետ: Վարագի ամենամեծ երգիչը՝ Զաքարիա Վարագեցին, այն վեր է դասում նույնիսկ Սինայից, Թաբորից ու Հերմոնից: Եւ ինչպես որ հետագայում Լուսավորչի տեսիլքի մեջ է պատկերվում կառուցել երեք վկայարաններ և Մայր Տաճարը, այնպես և տասներկու լուսաշող սյուների ելքով, Թ-ոդիկը պատկերում է կառուցել տասներկու եկեղեցիներ: Ահավասիկ այս է ընդհանուր գծերի մեջ Վարագա խաչի պատմությունը, որը ներառում և ներամփոփում է ժամանակային ու եկեղեցագիտական-պատմական բնույթի միանգամայն ինքնատիպ ու անկրկնելի-բազմաշերտ այնպիսի դեպքեր, անցքեր, որպիսիք, իբրև չվախճանվող ու չխամրող լուսաշող մարգարիտների մի ամբողջ համաստեղություն սփռված են մեր ողջ պատմագրության մեջ՝ հայացքով ուղղված դեպի անկորնչելի հավիտենությունը:

Սիրելի՛ հավատացյալներ, Սուրբ Խաչը մեր կյանքում ամենուր է գրեթե բառի բուն նշանակությամբ: Խաչով են կատարվում ու սրբագործվում բոլոր խորհուրդները: Տեղին է հիշատակելու իմաստուն առակողի խոսքը. «Այն կենաց ծառ է ամենքի համար, ովքեր պատսպարվում են նրանով և հաստատությամբ հենվում նրա վրա՝ իբրև Տիրոջ (Առակ. Գ. 18), որի մասին դարձյալ վկայվում է Օրենքի գրքում. «Պիտի տեսնեք ձեր կյանքը՝ կախված փայտից» (Բ. Օրինաց ԻԸ. 66), որովհետև ուր Խաչն է, այնտեղ են Խաչյալը և խաչելությունը, հետևապես և Հարությունը: Այլ խոսքով՝ Խաչը Քրիստոսի հանդերձն է և մեր հաղթության զենքը, մեր հարության հույսը: Խաչի խորհուրդը մեր ժողովրդի պատմության մեջ շարունակակա՛ն իրողություն է, անբեկանելի՛ ճանապարհ դեպի անսահմանը: Մեզ համար այն հիրավի՛ ազատությա՛ն, հուզավառվելու, հաստատագրվելու և մխիթարությա՛ն առիթ է, և ո՛չ երբեք ինքնակաշկանդումի: Ս. Խաչը մեր ինքնամաքրումի և ինքնատեսության վկան է ու երաշխավորը, մեր տագնապների թարգմանն ու աստվածառաք գալիքի անբեկանելի կամուրջը: Գողգոթայի Խաչով սրբագործված փրկագործությունը նույն Խաչով էլ ավարտվի պիտի այս աշխարհի վերջում, երբ Տիրոջ նշանը մի վերջին անգամ երևա և տեսնենք զորությամբ ու բազում փառքով եկող Մարդու Որդուն (Մատթ. ԻԴ. 30), որին փառք հավիտյանս, հավիտենից. Ամեն: